ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 17 » օգոստոս 2021 թվականի N 07 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 3-րդ, 4-րդ և 6.1-րդ կետերը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2020 թվականի նոյեմբերի 25-ի N 17-Լ որոշմամբ հաստատված՝ ԱԱՏՄ 2021 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

2. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություններ կատարելուն:

3. Հանձնարարել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հ. Ավագյանին՝ ապահովել Առողջապահական և աշխատանքի տեսչական

մարմնի որակի ապահովման վարչության 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների հաշվետվություններով ներկայացված առաջարկությունների կատարումը:

4. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2021 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների գործունեության կատարողականների գնահատումները:

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ

8/27/2021

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 Ն. ՄԿՐՏՉՅԱՆ